ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 նոյեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

157
(2637)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 126

Նախորդ տարվա մայիսի12-ից հետո, երբ ադրբեջանական զորքերը ներխուժեցին ՀՀ սուվերեն տարածք, վարչապետ Նիկոլ Փաշինյանը կեղծ պնդումներ էր անում, թե Ադրբեջանի հետ ՀՀ սահմանների նկարագրությունը տրվել է դեռեւս 2010թ. ընդունված «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Այս մասին Փաշինյանը հայտարարել էր մի քանի անգամ: Ուշագրավ է, որ օրենքն ընդունվել է ոչ թե 2010-ին, այլ 1995-ին, իսկ ուժի մեջ մտել է 1995-ի դեկտեմբերի 15-ին: 2010-ի հունիսի 24-ին օրենքում արվել են լրացումներ եւ փոփոխություններ: Իրականությունն այն է, որ ՀՀ-ն 2010-ին Ադրբեջանի հետ պետական սահման չի որոշել կամ տեղորոշել: Այս օրենքը ոչ մի կապ չունի պետական սահմանների որոշման հետ: Նրա կողմից մատնանշված օրենքը Հայաստանի վարչատարածքային բաժանման մասին է, այսինքն՝ այն ամրագրում կամ նկարագրում է ոչ թե ՀՀ-ի արտաքին-պետական, այլ ներքին սահմանները՝ համայնքների, մարզերի միջեւ: Պետական սահմանի վերաբերյալ գործում է «Պետական սահմանի մասին» օրենքը, որն ընդունվել է 2001-ի նոյեմբերին եւ ուժի մեջ է 2001-ի դեկտեմբերից: Այս օրենքում ասվում է. «Պետական սահմանի տեղորոշումն ու փոփոխումը կատարվում է ՀՀ միջազգային պայմանագրերով եւ ՀՀ օրենքով: ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա, պետական սահմանի ստուգման արդյունքում, պետական սահմանի փոփոխում պարունակող, պետական սահմանը տեղորոշող փաստաթղթերը գործողության մեջ են դրվում ՀՀ օրենսդրությանը համապատասխան»: Եվ ընդգծենք, որ ՀՀ անկախությունից ի վեր ՀՀ-ն Ադրբեջանի հետ չի կնքել պայմանագիր պետական սահմանի որոշման կամ տեղորոշման մասին. այդ հարցը բաց է: Այսինքն՝ ապրիլի 21-ին Սյունիքի մարզպետարանում Նիկոլ Փաշինյանի արած պնդումը՝ ՀՀ-ի կողմից իր պետական սահմանների որոշման եւ տեղորոշման մասին, կեղծ է:

Հոկտեմբերի 31-ից ՀՀ Ազգային ժողովում մեկնարկել են ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկումները: Սակայն ուշագրավ է, որ շատ գերատեսչությունների ղեկավարներ հարկ չեն համարել անձամբ գալ եւ ներկայացնել իրենց կառույցներին տրամադրվելիք ֆինանսական հատկացումներն ու անելիքները: Մինչ այդ մասին խոսելը, «Ժողովուրդ» օրաթերթը պարզապես հիշեցնում է ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանի խոսքերը՝ ասված բյուջեի քննարկումների ժամանակ, երբ նախկին իշխանությունների ներկայացուցիչները եւս անձամբ չէին գալիս խորհրդարան: Օրինակ՝ 2015 թվականի նոյեմբերի 3-ին Փաշինյանն անդրադարձել էր Երեւանի նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի եւ Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի բացակայությունների փաստին՝ ասելով. «Մարզպետներին էլ ասեք թող չգան, էդ մարդիկ ավելի հետաքրքիր գործեր ունեն, գալիս են էստեղ, մի ժամ ճանձրանում, հետո ելնում, ասում՝ էսքան տվեցին, էսքան ծախսեցինք»: Եվ, ահա, հենց իր իշխանության օրոք բյուջեի քննարկումներին չեն մասնակցել ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանը, արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Փամբուխչյանը, ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը, արդարադատության նախարարի պաշտոնակատար Գրիգոր Մինասյանը, դատախազ Աննա Վարդապետյանը: Եվ սա՝ չնայածհանգամանքին, որ ԱԺ պաշտոնական կայքում հենց այս պաշտոնյաների անուններն էին նշված՝ իբրեւ ներկայացողներ: Մեկ այլ հանգամանք եւս. Պետահիրավական հանձնաժողովի տիրույթում գտնվող կառույցների բյուջեի քննարկման ժամանակ նախագահող Վլադիմիր Վարդանյանն առհասարակ չհետաքրքրվեց, թե ուր են առաջին դեմքերը, իսկ ԱԺ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ նախագահող Անդրանիկ Քոչարյանը համարձակվեց հիշատակել միայն ոստիկանապետի բացակայությունը: Ուշագրավ է նաեւ, որ նախօրեին իր գերատեսչության հարցի քննարկումից բացակայող Արմեն Փամբուխչյանը երեկ, երբ խորհրդարանում էր նաեւ Նիկոլ Փաշինյանը, գերազանցիկ աշակերտի պես ներկայացել էր խորհրդարան: Նա նստած էր առանց անելիքի եւ ասելիքի:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն առաջիկայում խորհրդարան կմտնի 3 պատգամավորների մեղադրանք առաջադրելու եւ կալանավորելու միջնորդությամբ: Խոսքը «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի, նույն խմբակցության պատգամավորներ Վահե Հակոբյանի եւ Արմեն Չարչյանի մասին է, որոնց դատախազը կմիջնորդի պատգամավորական անձեռնմխելիությունից զրկել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ պատգամավորների նկատմամբ հարուցված քրեական գործերը տարբեր դեպքերի են առնչվում: Իսկ թե կոնկրետ որ քրեական վարույթներով է գլխավոր դատախազը նման միջնորդություններով պատրաստվում ԱԺ մտնել, չկարողացանք առայժմ պարզել: Փորձեցինք այդ հարցերի պատասխանները ստանալ անձամբ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանից: Դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը հայտնեց. «Գլխավոր դատախազությունում նշված անձանց վերաբերյալ այս պահին որեւէ միջնորդություն առկա չէ»: Նկատենք, որ Գլխավոր դատախազության պաշտոնական պատասխանի մեջ կարեւոր նրբերանգ կա՝ «այս պահին»: Սա նշանակում է, որ ամեն րոպե միջնորդությունը կարող է դրվել գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի սեղանին: Բանն այն է, որ ՔԴՕ 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է. «Վերադաս դատախազը հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով»: Այսինքն՝ ընդդիմադիր պատգամավորներին անձեռնմխելիությունից զրկելու եւ կալանավորելու միջնորդությամբ նրանց գործերով վերահսկող դատախազը կարող է մտնել Աննա Վարդապետյանի աշխատասենյակ եւ գործընթաց սկսել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանի դեմ հարուցված քրեական վարույթով առերեսումների շարք է սկսվել: Նախաքննական մարմինը Արցախի պաշտպանական բանակի հրամանատարների եւ այլ անձանց է հրավիրում հարցաքննության, առերեսում ՊԲ նախկին հրամանատարի հետ: Նկատենք, որ սովորաբար առերեսումներ են իրականացվում այն ժամանակ, երբ քրեական վարույթով հակասություններ են առաջանում գործով անցնող անձանց ցուցմունքներում: Դա է պատճառը, որ քննիչը Միքայել Արզումանյանին եւ գործով անցնող այլ անձանց նստեցրել է դեմ-դիմաց եւ կոնկրետ հարցադրումներ արել: Նկատենք, որ Արզումանյանը կալանավորվել էր սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս գտնվում է կալանքի տակ: Ի դեպ, գրել էինք, որ մինչեւ նրան մեղադրանք առաջադրելը վկայի կարգավիճակով հարցաքննվել է նաեւ ԱԺ պատգամավոր, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սեյրան Օհանյանը հաստատել էր տեղեկությունը: Միքայել Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում պաշտոնեական անփութություն կատարելու համար:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»

ԲՈԼՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր, ադրբեջանագետ Տաթեւիկ Հայրապետյանը:

-Սոչիում տեղի ունեցած հանդիպումից հետո Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, թե հայկական կողմը համաձայնել է «խաղաղության պայմանագրի», այսպես ասած, ռուսական տարբերակին, այն է՝ Արցախի հարցը առժամանակ հետաձգելուն: Նախ՝ դա ի՞նչ է ենթադրում, եւ երկրորդ՝ այդ մասով ադրբեջանական կողմն ի՞նչ է ասում: Նրանք, կարծես թե, հարցի ձգձգման ջատագովը չեն:

-Նախ արձանագրենք, որ Փաշինայնը հայտարարել է՝ Հայաստանը համաձայն է «խաղաղության պայմանագրի», այսպես կոչված, ռուսական տարբերակին, դեմ չէ արեւմտյան տարբերակին, ու ընդունելի է համարում Ադրբեջանի առաջարկած 5 կետերը: Ուստի Փաշինյանն, ըստ էության, ընդունելի է համարում այն ամենը, ինչ իրեն առաջարկում են: Դառնալով պայմանագրի ռուսական տարբերակին, որի բովանդակությանը ծանոթ չենք, ու միայն խոսվում է որոշ դրույթների մասին՝ կապված Արցախի հետագա կարգավիճակի, ճակատագրի հետ, ինչին նաեւ օրերս Հայաստանում Ռուսաստանի դեսպանն անդրադարձավ, ապա ռուսական կողմն, ըստ էության, հարցի կարգավորման հետաձգման ճանապարհով է ցանկանում գնալ: Եվ դա պարզ է, քանի որ Ռուսաստանը նպատակ ունի մնալ տարածաշրջանում, մասնավորապես՝ ռուս խաղաղապահները ցանկանում են երկարացնել իրենց մանդատն Արցախում, ու իրենց համար կարեւոր է հակամարտության գոյությունն առհասարակ: Այսինքն՝ երբ նրանք նշում են, որ՝ եկեք կարգավիճակը երկարաձգենք, դա չի նշանակում, թե հարցը լուծվելու է՝ հօգուտ Հայաստանի: Դա նշանակում է պահպանել եղած ստատուս-քվոն, ինչի միջոցով կարողանալու են տարածաշրջանում իրենց ազդեցությունը պահպանել: Բայց իրավիճակն այնպիսին է, որ այդ տարբերակը մեր շահերից չի բխում: Եվ դա այն պատճառով, քանի որ այս փուլում, երբ 44-օրյա պատերազմում պատվել ենք, իսկ Ադրբեջանը մաքսիմալիստական հավակնություններով է հանդես գալիս, խնդրի հանգուցալուծման ցանկացած տարբերակ մեզ համար շահավետ չի կարող լինել: Անգամ հաղթանակ տարած ժամանակ չկարողացանք խնդրի լուծման մեզ շահավետ տարբերակ գտնել, ուր մնաց այժմ, երբ ամեն բան ավելի անհավանական է թվում, կարողանանք շահած դուրս գալ: Ադրբեջանը, իհարկե, դեմ է Ռուսաստանի առաջարկած տարբերակին, քանզի խնդիրը փակված են համարում: Եթե ուշադիր լինեք, այդ մասին Սոչիում օրերս տեղի ունեցած եռակողմ հանդիպման ժամանակ Ալիեւը նորից հայտարարեց: Բայց իրողությունն այլ է, ու թե՛ Ռուսաստանը, թե՛ Արեւմուտքը, թե՛ այլ երկրներ շեշտում են՝ խնդիրը շարունակում է մնալ: Ադրբեջանը դիվանագիտական դաշտում լավագույն բանին որ հասնում է, այն է, որ կարողանում է «Լեռնային Ղարաբաղ» եզրույթը դուրս բերել հայտարարություններից ու տեքստերից: Բայց այն՝ Արցախը, կա, այնտեղ շարունակում են ապրել մեր հայրենակիցները, Արցախի անվտանգությունը շարունակում են ապահովել ռուս խաղաղապահներն, ու կարգավիճակի հարցը մնում է առկախված:

-Սոչիից անմիջապես հետո Փաշինյանը Իրան մեկնեց: Իրանը Կապանում հյուպատոսարան է բացել: Թեհրանն ակնհայտորեն ակտիվանում է տարածաշրջանում: Ինչո՞ւ, ինչի՞ց է զգուշանում:

-Կարծում եմ՝ Իրանի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ տարածաշրջանային բաղադրիչ ունի: Իրանն առաջին հերթին անհանգստացած է Իսրայելի ներկայության աճից, ու եթե ուշադրություն դարձնենք, ապա կնկատենք՝ ադրբեջանական քարոզչադաշտում հաճախ է շեշտվում՝ Իսրայելի ներկայությունն իր պետության ներսում բացառապես քաղաքացիական բնույթ է կրում: Իսրայելն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Կովսականում մեծաթիվ ներդրումներ է անում, ու այդ ամենն անհանգստացնում է Իրանին: Բացի այդ, Թեհրանը դեմ է հայ-իրանական սահմանի նկատմամբ որեւէ ոտնձգության, որովհետեւ իր համար անվտանգության առումով դա բավական կարեւոր է, ինչի մասին իրանցիները բավական բաց տեքստով են խոսում: Կարծում եմ՝ Իրանի վախերը կամ անհանգստությունները հասկանալի են՝ պայմանավորված տարածաշրջանում Իսրայելի ներկայության աճի գործոնով:

-Խոսվում է մինչեւ տարեվերջ «խաղաղության պայմանագիր» կնքելու մասին: Ի՞նչ եք կարծում, իրատեսակա՞ն են այդ ժամկետները, ու ո՞ր տարբերակն ի վերջո ընդունելի կլինի:

-Ես ընդհանրապես անհեթեթ եմ համարում քննարկումը, թե «խաղաղության պայմանագրի» համար որ երկիրն է ավելի լավ տարբերակ առաջարկել, որովհետեւ այսօր լավ տարբերակ չկա: Ինչ-որ դրույթների հարցով կան դրական կամ բացասական կողմեր, բայց, մեծ հաշվով, այսօր որեւէ մեկը չի կարող երաշխավորել «խաղաղության պայմանագրի» իրականացումը: Եթե այդքան ուժեղ լծակներ ունեն, ապա թող ստիպեն, որ Ադրբեջանն իր զորքերը մեր սուվերեն տարածքներից դուրս բերի, կանխեն հետագա ագրեսիաները: Այսօր որեւէ երաշխավոր չկա, որ կարող է ասել՝ ես կզսպեմ Ադրբեջանին, ուստի կարծում եմ՝ այդ մասով խոսակցությունն անգամ իսկապես անհեթեթ է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳԻՐ

ՊՆ-Ն ՊԱՏՎՈՎՃԱՐԸ ՉԻ ՏՐԱՄԱԴՐԵԼ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ՀՀ պաշտպանության նախարարության «Պասիվ ունեմ» ծրագրի 2022թ. շրջանավարտների երեկվա ավարտական միջոցառմանը զուգահեռ ցավալի իրականություն ունենք:

Ազգային ժողովում կազմակերպել էի հանդիպում 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողների հետ: Տղաները եղել են ՀՀ ՊՆ «Ես եմ» ծրագրի մասնակիցներ եւ մինչ ծրագրով նախատեսված ժամկետի ավարտը զոհվել են հայրենիքի համար մղված պայքարում: Սակայն ՊՆ-ն չի տրամադրել ծրագրով նախատեսվող պատվովճարը. օրենքում բացակայում է համապատասխան կարգավորումը: Կառավարության հետ գրագրության արդյունքում հասա նրան, որ ՊՆ-ի կողմից ՀՀ արդարադատության նախարարության քննարկմանը ներկայացվեց նախագիծ, որի անցումային դրույթները սահմանող 10-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսվել է, որ մինչեւ սույն օրենքի՝ ուժի մեջ մտնելը «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված պատվովճարը հաշվարկվում է նաեւ մինչեւ սույն օրենքի՝ ուժի մեջ մտնելը ՀՀ ՊՆ-ի կողմից նշված վայրում եւ պայմաններում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած եւ ծառայության ընթացքում զոհված (մահացած) կամ դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի ընտանիքի անդամներին, որոնք պատվովճարի գումարը տնօրինում են իրենց հայեցողությամբ՝ առանց ՀՀ կառավարության սահմանած ուղղությունների:

Օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը ստացվելուց հետո օրենքի նախագիծը պետք է ներկայացվեր ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Ընդունելով մեր տղաների ծնողների արդարացի պահանջը՝ ՀՀ կառավարությունից պահանջում եմ առաջնահերթ կերպով անդրադառնալ բարձրացված հրատապ խնդրին:

44-օրյա պատերազմից անցել է 2 տարի, իսկ համապատասխան լուծում պահանջող այս հարցը եւս Նիկոլ Փաշինյանի իշխանությունը դեռ չի լուծել:

Հետեւողական եմ լինելու այս հարցում: Պատերազմում զոհված տղաներին վերաբերելի բոլոր հարցերը առաջնահերթ են: Եվս մեկ անգամ պահանջում եմ հրատապ քայլեր՝ օր առաջ հասնելու անհրաժեշտ լուծմանը»:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի որոշման համաձայն՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը նոյեմբերի 8-ից 10-ը Սեուլ՝ Կորայի Հանրապետություն կմեկնի:

Նա այնտեղ կմասնակցի «Ծերացման եւ ցածր ծնելիության վերաբերյալ 2022թ. գլոբալ սիմպոզիում»-ի աշխատանքներին: Նշենք, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ԿՍՏԱՆԱՆ

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը այսօր՝ նոյեմբերի 3-ին, խորհրդարանի անվտանգության ու պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովում «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» նախագիծը կներկայացնի, որը ենթադրում է հավելավճար տրամադրել մարտական գործողությունների մասնակցած զինվորականներին:

Սահմանադրական դատարանի նախագահի, փոխնախագահի եւ դատավորի, դիվանագիտական աստիճան ունեցող անձանց հետ մեկտեղ օրենքի խմբագրմամբ հավելավճար կստանան նաեւ «մարտական խնդիրների իրականացրած, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական եւ շարքային կազմերի զինծառայողները»:

ԳԱԶ՝ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ

Օրերս՝ Հայաստանի եւ Իրանի միջեւ էներգետիկայի ոլորտում տնտեսական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո, պաշտոնական Երեւանն ու Թեհրանը երկուստեք հայտարարություն են տարածել, ըստ որի՝ Իրանից Հայաստան եկող գազի ծավալները կրկնապատկվելու են: Բավականին ոգեւորիչ այս հայտարարությունից հետո ոչ միայն ՀՀ քաղաքացիներն են ուրախացել՝ մտածելով, թե գազի սակագնի փոփոխություն կարող է տեղի ունենալ, այլ նաեւ իշխանավորները սա որպես դարի ձեռքբերում են ներկայացնում:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, սակայն, որ գազի ավելացող ծավալները կապված են նոր գործարկվող ջրեմաէլեկտրակայանի հետ: «2006 թվականի կնքված Հայաստան-Իրան գազի պայմանագրի համաձայն՝ մենք 1 խմ գազի դիմաց 3 կվ էլեկտրաէներգիա ենք վճարում: Այս ծրագիրը իրականացնում էր «Երեւան ՋԷԿ»-ը միայն: Այս տարի միացել է նաեւ «Ռենկո» ընկերության կառուցած նոր ՋԷԿ-ը»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց տնտեսագետ Սուրեն Պարսյանը: Տեղեկացանք նաեւ, որ ավելի շատ ներկրվող բնական գազի դիմաց ավելի շատ ենք Իրանին էլեկտրաէներգիա տրամադրելու: Ստացվում է, որ Իրանը Հայաստանին հավելյալ գազ է տալիս ոչ թե քաղաքացիների սոցիալական վիճակը մեղմելու, այլ սոսկ նոր ՋԷԿ-ը գործարկելու համար:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 31-ին Սոչիում տեղի ունեցած եռակողմ՝Նիկոլ Փաշինյանի, Իլհամ Ալիեւի եւ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպումից հետո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մեկնել է Թեհրան եւ բանակցություններ ունեցել նաեւ այնտեղ:

Փաշինյանը Սոչի էր մեկնել մեծաթիվ պատվիրակության հետ: Նրան ուղեկցում էին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը եւ այլք: Ընդհանուր առմամբ պատվիրակությունը բաղկացած էր 17 հոգուց:

Ինչպես նշեցինք, Սոչիից անմիջապես հետո վարչապետը մեկնել է Իրան՝ Թեհրան: Ընդհանուր պատվիրակությունը բաղկացած է եղել 14 հոգուց եւ երկու ԶԼՄ ներկայացուցիչ: Ընդհանուր առմամբ պատվիրակությունը նույնն է եղել, ինչ Սոչիում:

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆ

Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչները տուգանվել են շուրջ 433 միլիոն ՀՀ դրամի չափով: Մասնավորապես, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի որոշումներով՝ պատասխանատվության միջոցներ են կիրառվել ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող 3 ընկերությունների նկատմամբ, որոնք գովազդի միջոցով հասարակությանը փորձել են մոլորեցրել:

Մասնավորապես՝ պարզվել է, որ «Կաբարկո» ՍՊԸ-ն («Adjarabet») «Սլոթ Նինջա», «Վայրի Արեւմուտք», «5+1 Լայվ», «Սոֆթ Կոնստրակտ» ՓԲԸ-ն («Vbet») «ՀաջողԱկ», «ՀաջողՄիամսյԱկ», եւ «Դիջիթեյն» ՍՊԸ-ն («TotoGaming») «Քեշ-քեշ շահումներ», «Կոսմո Ռեյս» անվանումներով ակցիաների առնչությամբ իրականացված գովազդներում տեղեկատվությունը ներկայացրել են այն ձեւով, որն առաջացրել է թյուր տպավորություն, ակցիաների շրջանակներում գործել են մի շարք էական պայմաններ, որոնք կամ որոնց գոյության եւ հասանելիության աղբյուրի մասին տեղեկատվություն գովազդներում չի նշվել՝ դրանց վերաբերյալ սպառողին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով, ինչպես նաեւ իրականացված գովազդները հակասել են օրենքին:

Արդյունքում՝ հանձնաժողովի մի քանի որոշումներով «Սոֆթ Կոնստրակտ» ՓԲԸ-ի, «Դիջիթեյն» ՍՊԸ-ի եւ «Կաբարկո» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակվել են համապատասխանաբար 168 503 335 ՀՀ դրամի, 62 424 401 ՀՀ դրամի եւ 202 147 342 ՀՀ դրամի չափով տուգանքներ:

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Հոկտեմբերի 31-ին եւ նոյեմբերի 1-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպումներ է ունեցել Սոչիում եւ Թեհրանում: Նախ նա հանդիպել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին, ապա նաեւ Թեհրանում հանդիպում ունեցել Իրանի նախագահի հետ:

Միջազգային մամուլում տարբեր հրապարակումներ կան այդ հանդիպումների վերաբերյալ: Նախ՝ «Թուրան»-ը գրում է, թե Մոսկվան չկարողացավ Երեւանին համոզել, որ կարող է հայերի համար ավելին անել, քան Արեւմուտքը: Ապա մեկնաբանը շարունակում է. «Փաշինյանի բարձրացրած ոչ մի հարցի Պուտինը դրական պատասխան չտվեց: Դա նշանակում է, որ կարգավորման այսպես կոչված «ռուսական տարբերակը» պարզապես միֆ է: Կարելի է վստահաբար ենթադրել, որ Փաշինյանի առաջարկած կետերը եռակողմ հայտարարության նախագծում էին, բայց դուրս են մնացել Իլհամ Ալիեւի պնդմամբ»:

Իսկ ռուսական «Կոմերսանտ»-ը գրում է, թե Պուտին-Փաշինյան եւ Պուտին-Ալիեւ երկկողմ հանդիպումներից հետո արդեն պարզ էր, որ ոչ միայն խաղաղության համաձայնագրի, այլեւ, օրինակ, սահմանազատման սկզբունքների շուրջ Հայաստանը եւ Ադրբեջանը դեռ ի վիճակի չեն պայմանավորվել: Ռուսական Вестник Кавказа լրատվամիջոցը ծավալուն հոդված է հրապարակել «Պուտինն ու Ալիեւը չտրվեցին Փաշինյանի «սադրանքներին» Սոչիում» վերտառությամբ: Հոդվածի նախաբանում լրատվամիջոցը գրում է, որ Վլադիմիր Պուտինի, Իլհամ Ալիեւի եւ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Սոչիում բեկումային չի եղել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների վերջնական կարգավորման հարցում: Բանակցությունների արդյունքում հրապարակվեցին բավականին հերթապահ դիվանագիտական ձեւակերպումներ, որ Ռուսաստանը՝ որպես միջնորդ, աջակցում է իրավիճակի կարգավորմանն ուղղված ցանկացած ջանքերի, որ խաղաղ պայմանագիրը պետք է լինի երկու կողմերի փոխզիջման արդյունքը…

Սակայն Вестник Кавказа-ին հայտնի են դարձել Սոչիի բանակցությունների որոշ մանրամասներ: Լրատվամիջոցը գրում է. «Այսպիսով, մեր տեղեկություններով՝հայկական կողմը ցանկացել է ամփոփիչ հայտարարության մեջ արտացոլել այն իրադարձությունները, որոնք հակասական գնահատականներ ունեն:

Նախ՝ Սոչիում Երեւանի շահերը ներկայացնող վարչապետի գլխավորած թիմը ձեռնամուխ եղավ վերջնական փաստաթղթի տեքստում ներառել 2021 թվականի մայիսին տեղի ունեցած իրադարձությունների գնահատականը: Հիշեցնենք, որ անցյալ տարվա մայիսի 12-ին Սեւ լճի մոտ բախում էր տեղի ունեցել հայ եւ ադրբեջանցի սահմանապահների միջեւ: Այնուհետ Երեւանը պնդում էր, որ «ադրբեջանական զինուժը սահմանը ճշտելու պատրվակով փորձել է խորանալ Հայաստանի տարածք՝ օգտագործելով կեղծ քարտեզագրական նյութեր»: Ապա նշվում է, թե անցյալ տարվա մայիսին Բաքուն Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությանը խորհուրդ տվեց խուճապի չմատնվել, ընդունել Ադրբեջանի Ջանգիլանի, Գուբադլիի, Լաչինի եւ Քալբաջարի շրջանների միջպետական սահմանի ռեժիմի իրողությունը, անհիմն կերպով չսրել իրավիճակը տարածաշրջանում եւ լուծել նման խնդիրները երկու կողմերի զինվորականների միջեւ քննարկման եւ փոխադարձ շփումների միջոցով:

«Անհասկանալի է մնում, թե ինչու է Նիկոլ Փաշինյանը ոչ միայն որոշել հիմա վերհիշել այդ իրադարձությունները, այլեւ դրանց գնահատականը ներառել ամենաբարձր մակարդակով նախատեսվող փաստաթղթի տեքստում: Ավելին, ամփոփիչ ասուլիսում Վլադիմիր Պուտինն ասաց, որ «գտնվել են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանի սահմանազատման եւ սահմանազատման նախնական նախադրյալները»:

Ապա նշվում է, թե հայկական կողմն առաջարկել է հայտարարության տեքստում արտացոլել 2022 թվականի սեպտեմբերի կեսերի իրադարձությունները:

Հավելենք նաեւ, որ Вестник Кавказան հայտնի է որպես ադրբեջանամետ կայք, որն առավելապես հակահայկական քարոզչություն է իրականացնում Հարավային Կովկասում բնակվող ռուսախոս բնակիչների համար: Հայաստանին վերաբերող հոդվածները հիմնականում քննադատական են:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՅՑ՝ ՄՈՍԿՎԱ

Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանն աշխատանքային այցով կմեկնի Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա: Նոյեմբերի 3-ին ԱԽ քարտուղարը կմասնակցի ԱՊՀ մասնակից պետությունների անվտանգության խորհուրդների քարտուղարների 10-րդ հանդիպմանը:

ԱՄՆ–Ն ՀԱՎԱՏԱՐԻՄ Է

Ամերիկայի Միացյալ Նահանգները հավատարիմ է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատմանը եւ երկու երկրների միջեւ բանակցություններին. այս մասին լրագրողների հետ ճեպազրույցում ասել է ԱՄՆ պետքարտուղարության մամուլի խոսնակ Նեդ Փրայսը:

«Մենք հավատում ենք, որ ուղիղ երկխոսությունը հարցերը լուծելու եւ կայուն խաղաղության հասնելու բանալին է: Ի դեպ, երկու երկրներն էլ հայտարարել են, որ ձգտում են այդ կայուն խաղաղությանը: Այսպիսով, մենք հաջորդ ամիսներին կշարունակենք ներգրավված լինել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկկողմ եւ գործընկերների հետ, ինչպես նաեւ տարբեր կազմակերպությունների միջոցով ընթացող բանակցություններին նպաստելու գործում»,- ասել է Փրայսը:

Հարցին, թե կարող են արդյոք լինել ԱՄՆ պետքարտուղարի հեռախոսազրույցներ կամ հանդիպումներ երկու երկրների ԱԳ նախարարների հետ, Փրայսը պատասխանել է. «Մենք կանենք այն, ինչը կհամարենք ամենաօգտակարը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության հաստատման համար»:

3–ՐԴ ՆԻՍՏԸ՝ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի անդամները փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գլխավորությամբ նոյեմբերի 3-ին Բրյուսելում կմասնակցեն սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովների երրորդ նիստին: Այս մասին իր սոցիալական ցանցում գրել է ՀՀ ԱԳՆ խոսնակ Վահան Հունանյանը:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ ԿԱՆՉԵԼ ԵՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ անցած տարվա ԱԺ միջադեպի գործով Քննչական կոմիտեում հարցաքննության են հրավիրվել եւ հարցաքննվել միջադեպի ականատես տարբեր լրատվամիջոցների լրագրողներ:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ Ազգային ժողովի միջադեպի գործը ԱԱԾ-ն ուղարկել է Քննչական կոմիտե: Ինչպես հայտնի է, անցած տարի դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովում ծեծկռտուք տեղի ունեցավ. «Հայաստան» խմբակցության անդամ Իշխան Սաղաթելյանի օգնական Սյունե Գեւորգյանը պատմել էր, որ ծեծկռտուքը տեղի էր ունեցել ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի աշխատասենյակում:

Դրան, ըստ Գեւորգյանի, մասնակցել են ՔՊ-ական պատգամավորներ Հրաչյա Հակոբյանը, Վահագն Ալեքսանյանը, Սիսակ Գաբրիելյանը:

ԱԱԾ-ն քրեական գործ հարուցեց Ազգային ժողովում դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած միջադեպի գործով: Քրեական գործը հարուցվեց Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին կետով (Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով):

Տարեսկզբից ԱԱԾ-ն սկսել է ակտիվ քննչական գործողություններ: Ազգային անվտանգության ծառայությունը գնացել էր ԱԺ եւ հարցաքննել էր միջադեպի մասնակից պատգամավորներին, սակայն քրեական գործը 7 ամիս է, ինչ քննվում է ԱԱԾ-ում, եւ որեւէ մեղադրյալ կամ մեղադրյալներ չկան, իսկ հիմա էլ գործը տեղափոխվել է ՀՀ քննչական կոմիտե:

Հավելենք, որ ԱԱԾ-ն «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադեւոս Ավետիսյանի օգնական Գերասիմ Վարդանյանին եւս հրավիրվել էր ԱԱԾ՝ բացատրություն տալու:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ վերջինս հրաժարվել էր որեւէ բացատրություն տալ:

Հավելենք, որ ԱԱԾ-ում բացատրություն են տվել նաեւ Իշխան Սաղաթելյանի օգնական Սեւակ Նազարյանը եւ Արմենուհի Կյուրեղյանի օգնական Տարոն Նազարյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՆ ՏՈՒԺԱԾՆԵՐ ⇨

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 12:09-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Արարատի մարզի Արտաշատ-Վեդի ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ. ավտոբուսը բախվել է մարդատար ավտոմեքենային, կան տուժածներ:

ԱԻՆ-ից հայտնում են, որ դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Երեւան-Երասխ ավտոճանապարհի 36-րդ կմ-ին՝ Շահումյան գյուղի վարչական տարածքում, բախվել են MAN մակնիշի տուրիստական ավտոբուսը (վարորդ՝ Ա. Ա., ծնված 1962թ.) եւ Mercedes-Benz C մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Ա. Մ., ծնված 1993թ.). տուժածներ չկան:

Փրկարարները հոսանքազրկել են Mercedes-Benz C մակնիշի ավտոմեքենան, փակել գազի բալոնի փականը եւ սահմանազատել տարածքը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Վաղարշապատի քրեական հետախույզները հոկտեմբերի 28-ին ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Արմավիրի մարզի Արաքս գյուղի մի բնակիչ աճեցնում է կանեփ եւ տանը պահում թմրանյութ:

Տեղեկությունը ստուգվեց ու հաստատվեց:

Ոստիկանությունից հայտնում են, որ տղամարդու տնամերձ հողամասում հայտնաբերվեց կանեփի 55 բույս, հինգ պարկ՝ լցված ընդհանուր 17 կգ քաշով դեղնականաչավուն զանգվածով: Այյումիսկ տարայով սերմերն էլ մոտ 1,8 գրամ էին: Տանտերը տնից ներկայացրեց նաեւ ապակյա տարա՝ ավելի քան 1 կգ դեղնականաչավուն զանգվածով:

Ըստ նրա՝ կանեփն ինքն էր ցանել ու մշակել, իսկ դեղնականաչավուն զանգվածը Մարիխուանա է:

Դեպքի վերաբերյալ կազմված փաստաթղթերը ոստիկանությունից ուղարկվել են Վաղարշապատի քննչական բաժին: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ԿՐԱԿՈՑՆԵՐ

Նոյեմբերի 1-ին կրակոցներ են հնչել Գեղարքունիքի մարզում: Ժամը 18:00-ի սահմաններում ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Ճամբարակ քաղաքում գտնվող «Սարգսյանների եղնիկ» ՍՊԸ արագ սննդի կետում կրակոցներ են հնչել: Նմանատիպ մեկ այլ օպերատիվ տեղեկություն էլ ստացվել է ոստիկանության Ճամբարակի բաժնում:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ նշված սննդի կետում Գեղարքունիքի մարզի բնակիչներ 36-ամյա Ռոմիկ Մ-ն, 48-ամյա Արա Ս-ն, 37-ամյա Մամիկոն Ղ-ն եւ 57-ամյա Գագիկ Հ-ն Ճամբարակ քաղաքի Գարեգին Նժդեհ փողոցում գտնվող «Սարգսյանների եղնիկ» ՍՊԸ արագ սննդի կետում իրենց համար հատկացված առանձին սենյակում ճաշելու ընթացքում սենյակի պատուհանից դեռեւս չպարզված հանգամանքներում եւ պարզված հրազենից կրակոցներ են արձակել: Հայտնաբերվել է «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգի կրակված փամփուշտի պարկուճ: Դեպքի փաստով Սեւանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Ոստիկանությունն ու քննչական բաժինը ձեռնարկում են անհրաժեշտ միջոցառումներ կրակողի ինքնությունը պարզելու, նրան եւ հանցագործության գործիք ինքնաձիգը հայտնաբերելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԲԵՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ Երեւանի Մուրացան 109 հասցեից ոստիկանության Էրեբունու բաժին բերման են ենթարկվել մեկ տասնյակից ավելի անձինք:

Մենք տեղեկացանք, որ բերման ենթարկվածների թվում են եղել «օրենքով գող» Պզոն՝Արմեն Ղազարյանը, այլ անձինք եւս, որոնցից մեկը հայտնի է որպես «կաբելի տղա», որը շուտով պետք է դառնար «օրենքով գող»: Մենք տեղեկացանք, որ նրանց մոտից հայտնաբերվել է 140 գ կոկային եւ երկու ատրճանակ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԹԱՐ

Նոյեմբերի 2-ին՝ ժամը 08:45-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւանի Դավթաշենի կամրջի մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ. բախվել են երկու ավտոմեքենա, որոնցից մեկը դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ ընկել ձորը:

Պարզվել է, որ Դավիթաշենի կամրջի հարեւանությամբ բախվել են Mazda 6 եւ Nissan Tida մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով 1 հոգի տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Բախման հետեւանքով Mazda-ն դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կիսաօդային վիճակում հայտնվել Հրազդան գետի ափին՝ ծառերի վրա:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ձեռնարկված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում բացահայտվել է Վանաձոր քաղաքի 82-ամյա բնակչուհու սպանության դեպքը: Վանաձոր քաղաքի բնակչի կողմից մոր դին հայտնաբերելու վերաբերյալ ահազանգը ստացվել է 2022թ. նոյեմբերի 1-ին՝ ժամը 15:05-ին:

Անմիջապես դեպքի վայր է մեկնել քննչական-օպերատիվ խումբը եւ տարեց կնոջ դին հայտնաբերել իր ննջարանի մահճակալին՝ աջ ձեռքի դաստակի կտրած-ծակած վնասվածքով: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով:

Իրականացված անհետաձգելի միջոցառումների արդյունքում պարզվել են դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով հանդիսանում է տարեց կնոջ հետ նույն բնակարանում բնակվող թոռը՝ ծնված 2004 թվականին. վերջինս, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայությամբ, ձերբակալվել եւ հարցաքննվել է՝ներկայացնելով դեպքի հանգամանքները: Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 66 դեպք, որոնցից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺՎԵԼ Է

Բերդ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, 2021 թվականի նոյեմբերից մինչեւ 2022 թվականի սեպտեմբերի 30-ը համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար աշխատած, 2022թ. սեպտեմբերի 25-ին կայացած Բերդ համայնքի ավագանու ընտրություններում հաղթած, «Ջորավոր համայնք» դաշինքի ավագանու թեկնածուների ցանկի 2-րդ համար Սամվել Հովսեփյանը սեպտեմբերի 30-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի որոշմամբ 2 ամիս ժամկետով կալանավորվել է: Նա գտնվում է «Վանաձոր» ՔԿՀ-ում: Ս. Հովսեփյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը, նա հոկտեմբերի 1-7-ը, ի նշան բողոքի, հացադուլ էր հայտարարել: Ս. Հովսեփյանը մեղադրվում է Բերդ համայնքի Ներքին Կարմիրաղբյուր բնակավայրի մանկապարտեզի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին քարոզչության հարկադրելու համար: Ս. Հովսեփյանի պաշտպան, փաստաբան Գոռ Սաղոյանը հայտնեց, որ անցած շաբաթ վերաքննիչ դատարանը մերժել է Ս. Հովսեփյանի խափանման միջոց կալանքի վերաբերյալ իր ներկայացրած վերաքննիչ բողոքը: Փաստաբանը հայտնեց, որ ինքը դեռ չի ստացել դատարանի որոշումը, չգիտի, թե իրավական ինչ հիմնավորմամբ է վերաքննիչ դատարանը մերժել իր բողոքը: Գ. Սաղոյանը վերաքննիչ դատարանի որոշումը ստանալուց հետո կորոշի՝ այդ որոշումը բողոքարկել վճռաբեկ դատարան, թե ոչ: Ս. Հովսեփյանի հետ նույն մեղադրանքով կալանավորվել են նաեւ Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, «Ջորավոր համայնք» դաշինքի թեկնածուների ցանկի 36-րդ համար Հասմիկ Մելիքյանը եւ Ներքին Կարմիրաղբյուրի վարչական ղեկավար, «Ջորավոր համայնք» դաշինքի թեկնածուների ցանկի 44-րդ համար Լեւոն Առաքելյանը: Փաստաբան Գոռ Սաղոյանը հայտնեց, որ Վերաքննիչ դատարանը որոշել է բավարարել Հ. Մելիքյանի պաշտպանի ներկայացրած վերաքննիչ բողոքը, նրա խափանման միջոցը փոխվել է, Հ. Մելիքյանն ազատ է արձակվել, իսկ Լեւոն Առաքելյանի պաշտպանի՝ վերաքննիչ բողոքը մերժվել է, նա մնում է կալանքի տակ:

ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Դիլիջանի համայնքապետարանը հայտնում է, որ Դիլիջան խոշորացված համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի պահանջներով եւ հիմք ընդունելով Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի՝ 2020թ. մարտի 26-ի թիվ 02-Ն հրամանով հաստատված «Համայնքային ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման կարգը», հոկտեմբերի 27-ին որոշել է մրցույթներ հայտարարել «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի, «Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Դիլիջան համայնքի տրանսպորտ եւ լուսավորություն» ՀՈԱԿ-ի տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար: Այդ մրցույթները կկայանան նոյեմբերի 30-ին, դեկտեմբերի 1-ին եւ 2-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾ

ՈՐՔԱ՞Ն ԳՈՒՄԱՐՆԵՐ ԿՏԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի եւ ֆինանսավարկային ու բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում նոյեմբերի 2-ին շարունակվել է «ՀՀ 2023 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկումը: Պատգամավորների քննարկմանն են ներկայացվել ՀՀ իշխանության, պետական եւ դատական մարմինների, պետական վերահսկողության եւ կոռուպցիայի կանխարգելման համար նախատեսված ֆինանսական հատկացումները:

ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը հայտնել է, որ 2023թ. ՀՀ նախագահի աշխատակազմին նախատեսված է հատկացնել 1 մլրդ 686 մլն դրամ, ինչն ընթացիկ տարվա հատկացումից ավելի է մոտ 65 մլն դրամով:

ՀՀ Ազգային ժողովի համար նախատեսված հատկացումները 2023թ. կկազմեն 6 մլրդ 920 մլն դրամ՝ ընթացիկ տարվա 6 մլրդ 218 մլն դրամի դիմաց: Ֆինանսավորման ավելացումը պայմանավորված է 2023թ. հունվարի մեկից աշխատավարձերի դրույքաչափերի բարձրացմամբ:

ՀՀ վարչապետի աշխատակազմին հաջորդ տարի կհատկացվի 19 մլրդ 895,8 մլն դրամ՝ ընթացիկ տարվա սպասվող 21 մլրդ 883,7 մլն դրամի դիմաց:

Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանի հարցին ի պատասխան՝ նախարարը պարզաբանել է, որ վարչապետի աշխատակազմին հատկացվելիք գումարի նվազումը պայմանավորված է որոշ հանգամանքներով: Մասնավորապես, կան ծրագրեր, որոնք 2023թ. կա՛մ չեն շարունակվելու, կա՛մ իրականացվելու են այլ մարմինների կողմից:

Սահմանադրական դատարանին կհատկացվի 879 մլն դրամ ֆինանսավորում՝ 2022 թ. 834,6 մլն դրամի դիմաց:

Բարձրագույն դատական խորհրդին կհատկացվի 16 մլրդ 668 մլն դրամ: Այս տարվա հատկացումը կկազմի 15 մլրդ 149 մլն դրամ:

Արդարադատության նախարարությանը նախատեսված է հատկացնել 26 մլրդ 35 մլն դրամի ֆինանսավորում՝ ընթացիկ տարվա սպասվող 21 մլրդ 510 մլն դրամի դիմաց:

Գլխավոր դատախազության գծով ֆինանսավորումը կկազմի 7 մլրդ 623 մլն դրամ, այս տարի ֆինանսավորման չափը կկազմի 7 մլրդ 86 մլն դրամ:

Պետական վերահսկողական ծառայության համար գալիք տարում նախատեսված է 1 մլրդ 400,8 մլն դրամ, ընթացիկ տարում՝ 764,7 մլն դրամ: Քննչական կոմիտեին 2023 թ. կտրվի 11 մլրդ 342 մլն դրամ՝ այս տարի սպասվող 9 մլրդ 755 մլն դրամի դիմաց:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իր գործունեությունը կկազմակերպի 753,5 դրամի շրջանակում: Ընթացիկ տարում այդ գումարը կկազմի 370 մլն դրամ:

Հակակոռուպցիոն կոմիտեին գալիք տարում կհատկացվի 2 մլրդ 441 մլն դրամ՝ ընթացիկ տարվա 1 մլրդ 14,6 մլն դրամի դիմաց:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կստանա 1 մլրդ 376,8 մլն դրամ. 2022 թ. սպասվում է, որ այդ թիվը կկազմի 1 մլրդ 312,2 մլն դրամ:

Նախարարը ներկայացրել է նաեւ 2021 թ. ֆինանսական հատկացումները:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՐՑԱՔՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ ՀԱՆՎՈՒՄ Է

ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվական վարչությունից Armlur.am-ին հայտնեցին, որ առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. մայիսի 18-ի N 395-Ն եւ 396-Ն հրամանները եւ հավելվածները:

Իրավական ակտի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է 2022 թ. փետրվարին «Հանրակրթության մասին» օրենքում կատարված փոփոխություններով եւ լրացումներով: Նշված օրենսդրական փոփոխությամբ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու հավակնություն ունեցող անձանց քննության անցկացման, տնօրենի ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի դադարեցման գործընթացների վերաբերյալ մի շարք բարեփոխումներ են ամրագրվել:

Ներկայում գործող կարգով պետական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար կարող է դիմել միայն վերապատրաստում անցած անձը, որն ունի բարձրագույն կրթություն եւ վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի եւ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Հանրային քննարկման դրված նախագծերի համաձայն՝ հավաստագրի ձեռք բերման համար վերապատրաստման պարտադիր պահանջը հանվել է: Նախատեսվում է փոփոխություն իրականացնել նաեւ քննության անցկացման գործընթացում՝ սահմանելով միայն թեստավորման փուլ. հարցազրույցի փուլը հանվել է: Արդյունքում պարզեցվել են հանձնաժողովի ձեւավորման պահանջները՝ խուսափելով ավելորդ ծանրաբեռնվածությունից եւ ռեսուրսների ոչ արդյունավետ բաշխումից:

Այս բարեփոխումների արդյունքում տնօրենի թեկնածուի համար հավաստագրման գործընթացն անհրաժեշտ է դառնում միայն առաջին անգամ դիմող հավակնորդների համար: Նախատեսվող մեկ այլ փոփոխությամբ՝ գործող տնօրենները զարգացման ծրագրի կատարողականի արդյունքով կարող են համարվել ատեստավորված, որը հիմք կհանդիսանա, որ տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը երկարաձգվի եւս 5 տարով:

Ընդունվելու դեպքում նոր կարգերն ուժի մեջ են մտնելու 2023 թվականի հունվարից: Շահագրգիռ կառույցներն ու անձինք նախագծերի վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկները կարող են ներկայացնել մինչեւ նոյեմբերի 6-ը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Աճուրդ

Գայանե Քաջիկի Ռեզյանին պատկանող՝ ստորեվ նշված անշարժ գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Պարտապան) սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 24.11.2022 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի 11.03.2020թ. ՍՆԴ/0403/04/19 վճռով սնանկ ճանաչված Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ ստորեւ նշված շարժական գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապան Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ կողմից Աշխեն Արշակյանի հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման համար գրավադրված եւ Գայանե Քաջիկի Ռեզյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք.Երեւան, Կենտրոն Նորագյուղ թաղամաս 126/2 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը ((համաձայն գնահատման հաշվետվության շինության հնդհանուր տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար), Սեփականության իրավունքի վկայական՝ 01072015-01-0151, տրված՝ 01.07.2015 թվականին, կադաստրային ծածկագիրը 01-006-0711-0073, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, հողամասի չափը՝ 0,010454 հա, իրավունքի տեսակը՝ սեփականություն):

Մեկնարկային գինը ՝ 5,328,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված գույքի վրա առկա է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Գայանե Քաջիկի Ռեզյան անհատ ձեռնարկատիրոջ սնանկության գործով թիվ 2480103328850000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ԱՃՈՒՐԴ–ՎԱՃԱՌՔ

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 22.11.2022 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2480935:

-Մեկնարկային գին՝ 5,184,000 ՀՀ դրամ:

Լոտ 2 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սեւան, հյուսիս արեւմտյան մաս, «Իշխան» ռեստորանի հյուսիս արեւմուտք հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2161076:

- Մեկնարկային գին՝ 4,176,000 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2626848:

- Մեկնարկային գին՝ 1,800,000 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, – Անուշ Միլիտոսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Շորժա համայնք բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2140468:

-Մեկնարկային գին՝ 1,512,000 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

-Մեկնարկային գին՝ 2,205,000 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Երեւանյան փողոց, հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2186432:

-Մեկնարկային գին՝ 1,008,000 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 57/21 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2430110:

- Մեկնարկային գին՝ 6,660,000 ՀՀ դրամ:

Լոտ 9- Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Արարատի Մարզ, Մասիս համայնքում գյուղնշանակության հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2183736:

- Մեկնարկային գին՝ 2,007,000 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «FORD» մակնիշի, TRANZIT 2.4 TD տիպարի, 2000թ. արտադրության, 104 PP 11 պետհամարանիշով, կարմիր գույնի, բեռնատար տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ WF0LXXGBFLYC10424, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

-Մեկնարկային գին՝ 2,218,500 ՀՀ դրամ:

Լոտ 11 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված «MITSUBISHI» մակնիշի, MONTERO SPORT 3.0 տիպարի, 2000թ. արտադրության, 104 LL 11 պետհամարանիշով, սեւ գույնի, ունիվերսալ տեսակի ավտոմեքենան (նույնացման համար՝ JA4LS21HXYP038422, գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Վերին Գետաշեն, Բ թաղամաս, 2-րդ փողոց, 12):

- Մեկնարկային գին՝ 1,530,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՆՈՐ ԻՆՆՈՎԱՑԻՈՆ ԼՈՒԾՈՒՄ

«Ակբա» բանկը Հայաստանում առաջինը ներկայացնում է նոր ինովացիոն լուծում, որը NFC հնարավորությամբ անդրոիդ հեռախոսը վերածում է անկանխիկ վճարումներ ընդունող POS տերմինալի: Բանկի Acba SoftPOS հավելվածը վճարումներ է ընդունում ArCa, Visa, Master, AMEX, MIR վճարային անհոլում քարտերով, ինչպես նաեւ սմարթ հեռախոսներով եւ ժամացույցներով: Իրավաբանական անձինք Acba SoftPOS հավելվածը կարող են ներբեռնել Google Play-ից. սմարթֆոնը պետք է ունենա NFC-ի հնարավորություն:

Տեխնոլոգիան «գրպանի գործիք» է հատկապես փոքր ու միջին բիզնեսի համար. օրինակ՝ առաքիչները մեծ սարքեր տեղափոխելու փոխարեն կկարողանան վճարում ընդունել միանգամից սմարթֆոնով:

«Acba SoftPOS հավելվածը ստեղծված է Tap to Phone տեխնոլոգիայի վրա եւ թույլ է տալիս ընդամենը մի քանի հպումով անդրոիդ սմարթֆոնը վերածել վճարային տերմինալի: Acba SoftPOS հավելվածի ներդրմամբ նպատակ ենք ունեցել լուծել բիզնեսի ներկայացուցիչների խնդիրները, մասնավորապես՝ ռեստորանների, առաքման ծառայությունների, տաքսիների, վաճառակետերի՝ վճարումներ ընդունելու հնարավորությունը ցանկացած վայրում եւ ցանկացած ժամանակ: Այս տեխնոլոգիայի ներդրմամբ հնարավորութուն ենք տալիս Հայաստանում զարգացնել եւ տարածել անկանխիկ վճարումները: Վերջինս հնարավորություններ է տալիս հասնել նաեւ մեր առջեւ դրված խնդիրների կատարմանը երկրի թվային տրանսֆորմացիայի շրջանակում»,- նշել է «Ակբա» բանկի թվային բիզնեսի վարչության պետ Արթուր Կարճիկյանը:

«Հավելվածն ունի բոլոր հնարավորությունները, ինչ ավանդական POS տերմինալները: Բանկը տրամադրում է անհատական օգտագործման գաղտնաբառ, որը մուտքագրելով հավելվածում՝ հեռախոսը պատրաստ կլինի վճարումներ ընդունելու»,- նշում է բանկի POS տերմինալների սպասարկման բաժնի պետ Արտակ Թադեւոսյանը:

«Ակբա» բանկը շարունակում է թվային վճարային գործիքների ներդրմամբ խթանել անկանխիկ գործարքների տարածումը Հայաստանում: Արագ եւ հարմարավետ Acba SoftPOS-ը կնպաստի երկրում բիզնեսի էկոհամակարգի զարգացմանը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՍՈՍԻ ԼՈՍԸ» 4

ՀԱՎԱՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԻ ԱՐԿԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդեն հեռուստադիտողը հնարավորություն ունի դիտելու «Սոսի Լոսը» հումորային նախագծի չորրորդ եթերաշրջանը: ArmLur.am-ի հետ զրույցում նախագծի ղեկավարներ, դերասան Սոս Կարապետյանը պատմել է նկարահանման ընթացքի, նախագծի ստեղծման եւ Հավայան կղզիների արկածների մասին:

Մեր զրուցակցի խոսքով՝ նախագծի նկարահանումները տեղի են ունեցել Հավայան կղզիներում. «Անկեղծ կլինեմ. երբ ընկերներիս ասում էի, որ ցանկություն ունեմ այս եթերաշրջանը նկարահանելու Հավայան կղզիներում, ինձ բոլորը միաբերան ասում էին, որ հնարավոր չէ եւ ավելորդ գլխացավանք է, բայց, իհարկե, դա ինձ ետ չպահեց եւ էլ ավելի ուժ տվեց այն իրականացնելու: Անկեղծ կլինեմ. այս պրոյեկտը կյանքի կոչելը մի մեծ խնդիր եւ նպատակ էր ինձ համար, քանի որ Հավայան կղզիներում նկարահանում անելը շատերի համար երազանքի պես բան է, անգամ ռուսներին մինչ այսօր չի հաջողվել այնտեղ նկարահանումներ անել: Այսպիսով, երբ ամեն բան հստակեցվեց, սկսեցի թիմ հավաքել, առաջինը խոսեցի նախագծի սցենարի հեղինակ եւ ռեժիսոր Անուշ Պետրոսյանի հետ, եւ միասին սկսեցինք նախապատրաստական աշխատանքները: Թիմը ձեւավորվելուց հետո 15 օրով մեկնեցինք Հավայան կղզիներ, ու այդ 15 օրում պետք է հասցնեինք նկարահանումներն անել, այն էլ՝ այն պայմաններում, երբ նախապես ոչ մի բան պլանավորված եւ որոշված չէր, այսինքն՝ տեղը, վայրը եւ այլն: Առաջին անգամ հայտնվեցինք մի կղզում, որտեղ ոչ մեկ երբեք չէր գտնվել»:

Սոս Կարապետյանի փոխանցմամբ՝ նկարահանումներն անցել են շատ արկածային, շատ հետաքրքիր, դժվարին հաղթահարվող փորձություններով, բայց շատ երջանիկ:

«Ինձ համար առաջինը բարդ էր այնքանով, որ մեր 10 հոգանոց թիմից անգլերեն գիտեր միայն մոդել, դերասանուհի Արենա Ջեյնալյանը, եւ նա էր մեզ օգնում հաղորդակցվելու հարցում: Նախագծում նկարահանվել են նաեւ տեղի բնակիչները եւ այլ ազգի ներկայացուցիչներ: Ամեն մի օրը անցել ենք մի բարդ փորձության միջով: Նկարահանումներ ենք ունեցել նաեւ Մաու կղզում՝ մի հեքիաթային վայրում, որտեղից պետք է ստանայինք անմարդաբնակ կղզու տեսարաններ, սակայն այնտեղ հասնելու համար մեզանից պահանջվեց մի քանի ժամ քայլել եւ ջրի միջով անցկացնել նկարահանման ողջ տեխնիկան: Շատ վայրեր են եղել, որտեղ չեն թույլատրել անցկացնել նկարահանումներ, սակայն երկար պայքարից եւ ջանքերից հետո մեզ հաջողվել է»,- հավելեց Սոսը:

Սոս Կարապետյանի փոխանցմամբ՝ նախագիծը աննախադեպ է, քանի որ այն իրականացնելու համար պահանջվել է բավականին մեծ բյուջե, ծախսվել են մեծ գումարներ. «Ուզում եմ նաեւ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր ինձ աջակցել են, եւ ներողություն խնդրել Հայաստանում ապրող մեր հայրենակիցներից, մեր որդեկորույս մայրերից, քանի որ դժվարին ժամանակներ են մեր երկրի համար, բայց, կարծում եմ, այն շատերին դուր կգա եւ մի փոքր մարդկանց կկտրի իրականությունից: Ի դեպ, այն ցուցադրվելու է շաբաթական երկու անգամ, եւ նախատեսվում է մինչեւ Ամանորն ավարտել նախագիծը»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ Գ

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՉԱՓԸ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը Խնայողությունների միջազգային օրվա առթիվ բարելավել է ավանդների պայմանները: Կախված ներդրման ժամկետից՝ ՀՀ դրամով ավանդների առավելագույն տոկոսադրույքն աճել է 0,5 տոկոսային կետով՝ մինչեւ 10.5%: ՌԴ ռուբլով միջոցների ներդրման դեպքում առավելագույն աճը կազմել է 3 տոկոսային կետ՝ մինչեւ 5.5%: Առաջարկը տարածվում է «Շահավետ» եւ «Պրոգրես» ավանդների վրա:

30 օրից մինչեւ 2 տարի ժամկետով «Շահավետ» ավանդը «ՎՏԲ-Հայաստան» բանկի ֆիզիկական անձ հաճախորդները կարող են ՀՀ դրամով ներդնել մինչեւ 10.5% տարեկան առավելագույն տոկոսադրույքով եւ ռուսական ռուբլով՝ մինչեւ 5.5% տարեկան տոկոսադրույքով: Ավանդի նվազագույն գումարը կազմում է 100 հազ. ՀՀ դրամ կամ 10 հազ. ՌԴ ռուբլի, տոկոսները հաշվարկվում են ավանդի ժամկետի վերջում: Տվյալ պրոդուկտի շրջանակներում համալրման եւ մասնակի ելքագրման հնարավորություններ նախատեսված չեն: Նոր առաջարկը գործում է մինչեւ ընթացիկ տարվա նոյեմբերի 15-ը:

ՀՀ դրամով «Պրոգրես» ավանդատեսակի առավելագույն եկամտաբերությունն աճել է մինչեւ տարեկան 9.22%, ռուսական ռուբլով՝ մինչեւ 4.87%: Համալրման հնարավորությամբ այս ավանդը հասանելի է՝ սկսած 30 հազ. ՀՀ դրամից կամ 5 հազ. ՌԴ ռուբլուց, 30 օրից մինչեւ 2 տարի ժամկետով:

«ՀՀ կենտրոնական բանկի կողմից պահպանվող երկնիշ հիմնական դրույքաչափի ֆոնին այսօր խնայողական պրոդուկտների նկատմամբ հաճախորդների պահանջարկը շարունակում է բարձր մնալ: Հաշվի առնելով ավանդատուների պահանջները՝ մենք որոշել ենք բարելավել մեր երկու ամենապահանջված ժամկետային ավանդների պայմանները, որոնք կարելի է ներդնել առավելագույն շահավետ պայմաններով ՀՀ դրամով եւ ՌԴ ռուբլով: Ներկա պահին այս արժույթներով ավանդների մասնաբաժինը կազմում է բոլոր արտարժույթներով ներդրված ավանդների ավելի քան 90%-ը: Միեւնույն ժամանակ, ՀՀ դրամով ավանդները հաճախորդներին հասանելի են շուկայականից բարձր տոկոսադրույքով»,- մեկնաբանում է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Մանրածախ բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրենի տեղակալ Հայկ Գեւորգյանը:

Ֆիզիկական անձ հաճախորդները կարող են ձեւակերպել եւ համալրել ավանդներ ինչպես բանկի մասնաճյուղերում, այնպես էլ հեռահար՝ «Վիդեո բանկ» ծառայության միջոցով:

Բոլոր ավանդները երաշխավորված են ՀՀ ԿԲ կողմից հիմնված Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Ավանդի տոկոսագումարից գանձվող եկամտային հարկը կազմում է 10%:

Գործող ավանդների մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ «ՎՏԲ-Հայաստան» բանկի պաշտոնական կայքում, բանկի մասնաճյուղերում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն 87-87 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԼՈՒՐԵՐ

400–ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գերմանացի Յուրգեն Կլոպը 400-րդ հանդիպումն է անցկացրել «Լիվերպուլի» գլխավոր մարզչի պաշտոնում: Չեմպիոնների լիգայի խմբային փուլի վերջին տուրի խաղում անգլիական թիմը տանը 2:0 հաշվով հաղթել է իտալական «Նապոլիին»: Երկու թիմերն էլ նվաճել են 1/8 եզրափակչի ուղեգիր: Յուրգեն Կլոպը «Լիվերպուլի» պատմության մեջ չորրորդ մարզիչն է, որը հասնում է 400 հանդիպման ցուցանիշին: Ռեկորդակիրը Բիլ Շենքլին է (783 խաղ), երկրորդ տեղում Թոմ Ուոթսոնն է (678), երրորդը Բոբ Փեյսլին է (535): Կլոպի ղեկավարությամբ «Լիվերպուլը» տարել է 243 հաղթանակ, 90 խաղ ավարտել ոչ-ոքի, կրել 66 պարտություն, խփել 833 գոլ, բաց թողել 394 գոլ:

«ԲԱՎԱՐԻԱՅԻ» ՌԵԿՈՐԴԸ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիան» սահմանել է Չեմպիոնների լիգայի ռեկորդ՝ երկրորդ մրցաշրջանում անընդմեջ հաղթանակներով ավարտելով խմբային փուլի բոլոր հանդիպումները: Գերմանացի Յուլիան Նագելսմանի գլխավորած թիմը 2-ական հաղթանակ տարավ Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի», Իսպանիայի փոխչեմպիոն «Բարսելոնայի» եւ չեխական «Վիկտորիա Պլզենի» նկատմամբ: Անցած մրցաշրջանում «Բավարիան» խմբային փուլում 6 հաղթանակ էր տարել պորտուգալական «Բենֆիկայի», «Բարսելոնայի» եւ Կիեւի «Դինամոյի» հետ պայքարում: «Բավարիան» նաեւ միակ թիմն է, որը պատմության մեջ երեք մրցաշրջանում հաղթանակով է ավարտել Չեմպիոնների լիգայի խմբային փուլի բոլոր հանդիպումները: Առաջին անգամ մյունխենյան ակումբը նման արդյունք գրանցել էր 2019-2020 թվականների մրցաշրջանում: Նախկինում խմբային փուլի բոլոր հանդիպումները հաղթանակով են ավարտել նաեւ իտալական «Միլանը» (1992/93), ֆրանսիական ՊՍԺ-ն (1994/95), ռուսական «Սպարտակը» (1995/96), «Բարսելոնան» (2002/03), Մադրիդի «Ռեալը» (2011/12, 2014/15), Ամստերդամի «Այաքսը» (2021/22) եւ անգլիական «Լիվերպուլը» (2021/22):

ԵՐԱԶՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի պաշտպան Սերխիո Ռամոսը երազում է դարձյալ մասնակցել աշխարհի առաջնության: «Բոլորը գիտեն, թե ինչ մեծ նշանակություն ունի ազգային հավաքականում խաղալը: Ես ինձ դարձյալ լավ եմ զգում եւ պատրաստ կլինեմ աշխարհի առաջնությանը, բայց մասնակցությունս ինձնից կախված չէ: Որոշողը Լուիս Էնրիկեն է, որին ես շատ եմ հարգում: Երազում եմ հավաքական վերադառնալու եւ աշխարհի առաջնությանը մասնակցելու մասին: Հույս ունեմ, որ կհայտնվեմ Քաթարում»,- ասել է Սերխիո Ռամոսը: 36-ամյա ֆուտբոլիստն ընթացիկ մրցաշրջանում ՊՍԺ-ի հետ մասնակցել է 17 հանդիպման, խփել 1 գոլ, կատարել 1 գոլային փոխանցում: Սերխիո Ռամոսը 2010թ. աշխարհի չեմպիոն է, 2008 եւ 2012-ի Եվրոպայի չեմպիոն:

● Նոյեմբերի 7-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Կուլիսներում կամ թատրոնի անատոմիա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Երբ է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակվում:

Հայկ Պողոսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի եւ այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք այն աստիճան են նվազեցրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, որ, դատարանի համոզմամբ, սույն օրենսգրքի հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափը կամ ժամկետը խիստ է տվյալ անձի համար, ինչպես նաեւ խմբի կողմից կատարված հանցանքի մասնակցի կողմից այդ խմբի կատարած հանցագործությունը բացահայտելուն աջակցելու դեպքում դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ կամ ժամկետ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համագործակցության վարույթ կիրառելու դեպքում եւս դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ կամ ժամկետ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով: Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելն արգելք չէ լրացուցիչ պատիժ նշանակելու համար:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞r դեպքում կարող է ամուսինների գույքի վրա բռնագանձում տարածվել:

Գոհար Աղաբեկյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսիններից մեկի պարտավորություններով բռնագանձում կարող է տարածվել միայն այդ ամուսնու գույքի նկատմամբ: Այդ գույքն անբավարար լինելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու ամուսինների ընդհանուր սեփականության մեջ պարտապան ամուսնու հասանելիք բաժնի առանձնացումը՝ դրա նկատմամբ բռնագանձում տարածելու համար: Ամուսինների ընդհանուր գույքի նկատմամբ բռնագանձումը տարածվում է ամուսինների ընդհանուր պարտավորություններով: Եթե դատավճռով հաստատվել է, որ ամուսինների ընդհանուր գույքը ձեռք է բերվել կամ ավելացել է ամուսիններից մեկի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հաշվին, ապա բռնագանձումը կարող է տարածվել համապատասխանաբար ամուսինների ընդհանուր համատեղ գույքի կամ դրա մի մասի վրա:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Իրենց երեխաների պատճառած վնասի համար ամուսինների պատասխանատվությունը որոշվում է քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով: Այդ դեպքում ամուսինների գույքի նկատմամբ բռնագանձումը կատարվում է սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանյան առաջատար SPRING PR ընկերության համահիմնադիրներ Նվարդ Մելքոնյանն ու Տաթեւիկ Սիմոնյանը Women Achievers Awards 2022 մրցանակաբաշխության ժամանակ արժանացել են «Տարվա համաշխարհային PR առաջնորդ» մրցանակին՝ ընդգրկվելով 2022 թվականի համաշխարհային հաղորդակցության եւ PR-ի ոլորտի 50 կին առաջնորդների ցանկում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.11.2022**
Հասցեն՝ Զեյթունի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: